

ՆԻՔՔԻՆ ԵՍԻՔԻՆ

Կոստանդնուպոլիս, 28 Յունիսի:

Քաղաքականութիւնը քանի մը ատենէ ՚ի վեր մեծ անդորրութեան մէջ ըլլալով, ու լըլանիայի գործքերը արդէն բարեյաջող վախճան մը ընդունելով, Երզրութեան բարձրագոյն ատենը հիմակուհի մայ մասնաւորապէս երկու երևելի դատողութեանց վրայօք զբաղեալ է: Եւ աջին՝ Վոնիայի մօտ Սիլլէ գեղը պատահած դժբաղդ զիպուածն է, որուն կը յուսացուի թէ մօտ օրերս արժանաւոր վճարահատութիւն մը պիտի տրուի: Երկրորդ՝ ալպանացի զինուոր խուճկոյրդներուն դատապարտութիւնն է, որոնք երկու հարուր հոգիի չափ են, ու իրենց ստղտանելի վարմունքովը՝ նոյն նահանգին հասարակութիւնը ապստամբութեան զբաղեցին, ու պատճառ եղան այնքան արիւնհեղութեան: Եւսոյ դատաստանը չկարծուիր թէ շուտով մը վախճան ընդունի: Վասն զի Երբարութեան բարձրագոյն ատենը խիստ զգուշութեամբ հոգ կը տանի ամէն կերպ օրինաւոր քննութիւնները գործքի զինէլ, ու ճշմարտութեանը արդէլ մը տեղեակ ըլլալով, անկէ ետքը պիտի վճարահատութիւն ընէ տէրութեան սահմանազրութեանց ու օրինացը համեմատ:

Թօփիսանէի միւշուր Մէհմէմէտ Լըլի փաշային առաջարկութեամբը, Բարձրագոյն Գուռը միտք

ունի քաղաքական կառավարութեան վերաբերեալ կարգադրութիւն մը հաստատել մօտ օրերս: այլ մինքն պահպան զօրքերու յատուկ խումբ մը պիտի որոշուի, ինչպէս սովորութիւն է Եւրոպայ ալ, ուրոնք հոգ տանելու են մայրաքաղաքի բարեկարգութիւնը անվրդով պահելու, փողոցները լուսաւորելու, տուներուն վրայ թուանշան դնելու, ճամբաները մաքրել տալու եւ: Եւ քաղաքական ընդհանուր կառավարութեանը վերաբերեալ ուրիշ ժողով մըն ալ պիտի հաստատուի, որուն մէջ օտար տէրութեանց ղեկավարներուն կողմանէ գործակալներ պիտի գտնուին, որպէս զի կարող ըլլայ յիշեալ ժողովը վճարահատութիւն ընէլ թէ որ եւրոպացւոց պատկանեալ գործ մը պատահելու ըլլայ:

— Թուրքիոյ ղեկավան Վսեմափայլ մօսու տը Գիլզովը, անցած հինգշաբթի օրը արտաքին գործոց տեսուչ Իփթաթ փաշային տունը ճաշ ըրաւ:

— Կառավարութիւնը իմանալով թէ ասպատակի նաւեր կը գտնուին Սե ծովուն վրայ, Գանուբի առաջներուն մերձակայ կողմերը, անմիջապէս հարկաւոր միջոցները գործքի զբառ նաւարկութեան ապահովութիւնը հաստատ պահելու համար:

— Ենցած շաբաթ չորեքշաբթի օրը հրկիզութիւն մը պատահելով Եւրոպ ըսուած արուարձանը 5-6 տուն այրի յան, որոնց մէջ հրեայ գերդաստաններ կը բնակէին:

— Գաղղիոյ ղեկավան Վսեմափայլ պարոն տը Պուրքընէյը, ամսուս 24ին շաբաթ օրը մեծ հացկերոյթ մը ըրաւ Գարապիա իր պալատը, ուրտեղ հրուիրուած էին օտար տէրութեանց զրեթէ բոլոր ղեկավարները և ուրիշ քանի մը երևելի անձինք:

— Բարձրագոյն Գուռը լսելով թէ Յունաստանն քանի մը խումբ անզգամ մարդիկ զինուորելով օսմանեան երկիրը մտեր են աւաղակութիւն ընելու համար, հրաման իրկեց անմիջապէս որ ղեկ ՚ի սահմանագրութիւն մէկ երկու գունդ զինուոր ևս խըրկուի, ու ամէն կերպ զգուշութիւնները գործքի զընեն, հասարակաց ապահովութիւնը ու անդորրութիւնը հաստատ պահելու համար:

ԵԳԻՊՏՈՍ

Եղեքսանդրիա, 14 Յունիսի:

Եւսուս 10ին առաւօտուն հասաւ մեր նաւահան զխտը Լոնտոնայէն գալով Ղէյսըր ըսուած Ենգղիոյ տէրութեան շոգենաւը, որուն մէջն էր Էնգլաստանու ընդհանուր կառավարիչ սըր Էնրի Էքսթրինձը: Բարձրագոյն փոխարքան մեծ պատուով ու յարգութեամբ ընդունեց յիշեալ երևելի անձը, որուն ցամաքը ելելուն քաղաքիս ամրոցներէն 19 թընդանօթ արձակեցին, ու Կորին Բարձրութեան հրամանաւր յատուկ պաշտօնատարներ ու պատուոյ զինուորներ կըսպասէին ծովեղերը, որոնց առաջ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Աւերածու փողոցայ:

Ղէրբիս Պատթալի փորձնուացի վաճառականի մը տղայ, օր մը տմառ ատեն կէս օրը շորս ժամ անցած ետաւ, իր թղթերը և գրքերը ձեռքը բռնած որ դպրատուն երթայ:

Թեպէտև հոն շատ տղաք կը գտնուէին իրեն հասակակից և վարժապետը չէր ծնծեր զանոնք ինչպէս որ ատեն մը կընէր, ՚ի վերայ այսր ամենայնի վախէն քայլ մը առաջ կերթար ու երկու քայլ ետ կը դառնար. կը թուէր իրեն թէ մեռնելու կերթայ:

Ենկա բան սորվելու դիւրութիւն չունէր, և ոչ աշխատելու կամք, անանկ որ շատ անգամ արժանապէս կը նահատուէր, ու քանի որ շատ յանդիմանութիւններ կը լսեր վարժապետէն, իր սրտին մէջ այնքան կաւելնար դպրատան վրայ ունեցած ատելութիւնը: Երջն օրն ալ սովորականէն աւելի վախնալով, վասն զի դասը սերտելու տեղը խաղի ետեւէ եղեր էր, անոր համար արդէլ դիտոր որ յանդիմանութիւն պիտի լսէ, նախ վարժապետէն և ետքը իր հօրմէն:

Ղէրբիսն զպրատուն երթալու ժամանակը ճամբան երկնցընելու համար, Երնօ ըսուած գետին հիւսիւսային կողմէն կը զարնէր, և որովհետև անուշ հով մը կը վիշէր հոն, կամաց կամաց քալելով կը մտածէր իր գրեւոր և

զած բաները, ու կըսէր ինքնիրեն. «Որչափ դժբաղդ եմ ևս, ՚ի նչ անհանգիստ կեանք ունիմ. ամէն օր գրէ կորդա հաշիւ ըրէ. և ցորեկուան ամենէն գեղեցիկ ժամերը այս ձանձրացուցիչ գործքերուն մէջ կանցընիմ»:

Շատ տղաք կան որ առանց գիտնալու այս բաներս հանգիստ կապրին, և ՚ի նչու համար անոնց մէջը չպիտի դանուիմ ևս ալ: Մ՛հ. սոյն ևս ալ անոնց պէս կը ցանկայի ըլլալ զիր գրելը օգուտ մը չընէր, կարգաւէն բան մը չեմ հասկընար, կարգացած գիրքերս մտքիս մէջ չեն մտնիր. ուստի չեմ ուզեր իս ձանձրացունել. թէ որ սորվելու կամք չունիմ նէ ևս, անօգուտ է ինձի սորվեցընելնին:

Եսանկ մտածութիւններ ընելով յանդիմանութեամբ մը կը զրոյցէր ամենուն թէ կարգաւոր միտք չունիմ: Գիրքս և թղթերս Երնօ գետին մէջ պիտի նետեմ ու գրուխս պիտի առնեմ երթամ, ետքը ՚ի նչ կը լըլայ նէ ըլլայ:

Եսանկ ըսելով ղեկ ՚ի գետեղերը կը վազէր ու ձեռքը կը վերցընէր ՚ի գործ դնելու համար իր տարօրինակ խորհրդը: Ենտանը խոպոտ ձայն մը լսեց մօտէն որ կը պօռար. խն ու տղոյ, կեցի՛ր կեցի՛ր ՚ի նչ կընես: Ղէրբիսն սաստիկ վախնալով ետեւ կը դառնար որ տեսնէ թէ արդեօք հայրը կամ իր վարժապետն էր որ զինքը կը սաստէր: Բայց ամենէն ուրիշ մէկը չտեսաւ հոն, այլ միայն աւելածու մը անկէ քիչ մը հեռու, որ ղեկ ՚ի տըղուն կընայէր իրատեղու կամ յանդիմանելու կերպով մը: Ղէրբիսն գարձաւ բարկութեամբ մը ու ըսաւ անոր. ՚ի նչ կընեմ ևս քեզի, թուղթը իմն չէ՛ մը, կուզեմ գետը

կընտեմ, կուզեմ ծովը կընտեմ. քեզի՛ ինչ մի թէ վարժապետութիւն կուզես ընել ինձի:

Իրաւոր ինձի վնաս մը չիտար նետել, պատասխան տուաւ այն մարդը, անանկ ցուցընելով թէ ամենէն իր հոգը չէր. բայց՝ որովհետև իմ ամէն դժբաղդութիւններս տգիտութեանէս առաջ եկան, ըսաւ, անոր համար երբ տեսայ որ գրքերդ գետին մէջ կընտես փոխանակ կարգաւոր և յարգութեամբ պահելու զանոնք, չկըցայ համբերել որ չպօռամ: Բայց եթէ զուտ ալ դժբաղդաբար իմ խելքովս ևս նէ, ըրէ ուրեմն ուզածդ, սակայն օր մը պիտի գայ որ գուն ալ ինձի պէս պիտի զըլաս, բայց զուր տեղը. և սասնկ ըսելով դարձաւ ու սկսաւ հաւաքել փողոցին աղբերը:

Ղէրբիսն քիչ մը մտախոտքի երթալով կընայէր անոր երեսը, ու հետաքրքրութեանէ շարժելով ուղեց գիտնալ անոր գրուելը եկածները. ուստի քիչ մը մօտեցաւ անոր ու քաղաքավարութեամբ մը ըսաւ. բարեկամ ըսէ ինձի կաղաչեմ, ինչո՞ւ համար կը զըլաս կարգաւ չսորվելուդ վրայ:

Պատմութիւնը շատ երկար է, պատասխան տուաւ աւելածուն կոպտութեամբ մը. բայց տղան կըստիպէր որ զըուցէ. վերջապէս մարդը գետինը դնելով աւելը և կողովը (քիւֆէ) նստաւ իւր պղտիկ կառքին վրայ ու սոսպապէս սկսաւ խօսիլ:

Ղէրբիսն ալ անոր քովը ոտքի վրայ կայնած մտիկ կընէր:

նորգութեամբը Ասեմափայլ սրբ և ևէրտինձը
Մէհեմէտ Ալի փաշային պարտոր զնաց այցելու
թիւն ընելու և ու անոր հետ երկու ժամու չափ տե
սութիւն ըրաւ և տեւեալ օրը խարճարպատիւ փո
խարքան ճաշի հրաւիրեց և նդկաստանու ընդհանուր
կառավարիչը և ու երկար ժամանակ իրարու հետ
առանձին խօսակցութիւն ըրին և Արհատատեն թէ
զանազան հարկաւոր երեւելի գործքերու վրայօք զըոյց
ըրած են և մանաւանդ Վայրիէէն ինչուան Սուէզ եր
կաթէ ճամբայ մը շինելու վրայօք :

Ասեմափայլ սրբ ևէրտին ևէրտինձը երեկ ճամ
բայ երաւ Վահրիէ երթալու և որին խարճութեան
շոգենաւովը և Յիշեալ բարձրատարիճան պաշտօնա
տարին համար յատուկ շոգենաւ մը պատրաստ կը
մնայ Սուէզ և ուսկից Պոմպա պիտի տանի զինքը :

Հնդկաստանու նախորդ ընդհանուր կառավարիչը
մօտ օրերս կըսպասուի հոս և ու կրտեն թէ ճէյսը
ըսուած շոգենաւով Անդղի պիտի դառնայ :

Աս վերջի տարը օրուան մէջ զանազան շոգենա
ւերու երթալուն ու գալուն պատճառաւ մեծ շար
ժուամ մը եղաւ քաղաքիս հասարակութեանը մէջ
վասն զի գրեթէ 200 ճամբորդէն աւելի կային որոնց
մէկ մասը և նդկաստանէն եկած են և ու մէկ մասը
Անդղիայէն եկած են և ու և նդկաստան պիտի երթան :

Պոմպայի ու կալիպիայի անգղիական շոգենաւերը
աս անգամ գրեթէ երկուքն ալ մի և նոյն ստեն հա
սան Սուէզ և Վս առթով և նդկաստանէն ու Չինաս
տանէն եկած լուրերը նշանակութեան արժանի քա
ղաքական դիպուած մը չեն ծանուցաներ :

Ամուս 7ին հասաւ հոս Օրիէթը և ըսուած շո
գենաւը Վոնտայի գալով և ուսկից բերած գիրերը
մայիս 26էն են :

Եզիպտոսի քաղաքական վիճակը միշտ հանդար
տութեան մէջ է և խարճարպատիւ փոխարքան ան
դադար ջանք կընէ օր առաջ լրմընցընելու արդէն
սկսուած երեւելի շինութիւնները և Վաղաքիս ամ
րութիւնները փութով կը յառաջանան :

Իմ հայրս ջաղացպան (տէյրմէնձի) էր և իրեք տղայ
ունեցաւ ան, որոնցմէ ամենէն պզտիկը ես եմ, իմ եղ
բայրներս գրիւ, կարգալ ու թուաբանութիւն սորված
էին մեր առաջնորդէն որ մարդասիրութեամբ կըսորվեցը
նէր իր թեմին մէջ եղող բոլոր ժողովուրդին տղոցը :
Իս ալ հոն խրկեցին, բայց միշտ սիրտս չուզելով երթա
լուս համար՝ բթամիտ մնացի, և մէկ տարուան մէջ սյ
րուբնէն անդին չանցայ և անանկ որ բարեսիրտ առաջ
նորդը տեսնելով որ ինձի բան սորվեցընելը անկանին
(հավան) մէջ ջուր ծեծելու կընմաներ և ուրիշներուն
սորվելուն ալ արգելք և չար օրինակ կը լլամ, վընտնեց
զիս դպրատունէն :

Իմ ծնողքս շատ ցաւեցան սո բանիս վրայ և բայց ես
ամենեւին ակամօջ չգրի ոչ մէկին, և ոչ մէկալին, թուրու
մուր կընէին ինձի ու հաստգրուի անմիտ կըկանչէին և
ես մտիկ չէի ընել, ու խնութեան զարնելով միայն ու
տեղու խմելու ու զուարճութեան ետեւէ էի : Իմ մեծ եղ
բարքս ըստ կարի կօզնէին հօրս՝ առուտորին մէջ, ու
հայրս ամէն շաբաթ անոնց քիչ մը դրամ կուտար, բայց
ինձի բան մը չէր տար, վասն զի ամենեւին իր գործքին
օգուտ մը չէի ընել : Վսանկով իմ տարիքս միշտ կըմեծ
նար, ու կատարեալ երիտասարդ եղայ առանց ստակ մը
ունենալու, և անոր համար միշտ շատ կընեղանար սիրտս :
Վանի մը չար բարեկամներուս խորհուրդով, սկսայ
տանը մէջէն հին զգեստներ գողնալ ու գողտուկ ծախել :
Երբոր բանը իմացուեցաւ առջի անգամ սաստիկ պատ

Իպրահիմ փաշան զեռ Վահրիէ է և բայց սո օ
րերս կըսպասուի Աղէքսանդրիա և ուրտեղ պիտի
բերէ հետը նաև նորահասակ իշխանները և որոնք
Վաղը իս պիտի խրկուին Մէհեմէտ Ալի փաշային
հրամանաւը իրենց կըթուծինը կատարելագործե
լու համար :

ԱՍՈՐԵՍՏԵԼՆ

Պէրու թ, 22 Յունիսի :

Ամուս 11ին կիրակի առտու օմանեան նաւա
տորմիղը և խարճարպատիւ մեծ ծովապետ և ալիւ
փաշային հրամանատարութեամբը և հասաւ մեր նա
ւահանգիստը և ինչ ամէնը եօթը հատ նաւ են և այ
մինքն 6 եռայարկ նաւ (իւչ անպարը) և 2 Փուէկաթ
ու 1 մեծ շոգենաւ և խարճարպատիւ ծովապետը ան
միջապէս ցամաքը ելլելով և իր բարձր աստիճանին
վերաբերեալ պատուով ընդունեցաւ և ու մեր կառա
վարչին պալատը բնակիլ հաճեցաւ և տեւեալ օրը
քաղաքիս ամէն հիւպատոսները փութացան այցե
լութեան երթալու և որին խարճութեանը որ մար
դասիրական քաղաքավարութեամբ ընդունեց զա
նոնք :

Անցած ուրբաթ օր մեծ ծովապետը հաղար հո
զիի չափ զօրք նաւերէն դուրս հանել տուաւ և զի
նուորական կըթուծին ընէլ տալու համար անոնց :
Իսոր եւրոպայիները կըփութային օմանեան կա
նոնաւոր զօրքերը տեսնելու երթալու և բայց ասոր հա
կառակ տաճիկները կըփախչէին ու տուներնին կը
պահուէին և վախնալով որ չըլլայ թէ սո բանը
ճարք մը ըլլայ իրենցմէ զինուոր գրելու համար և
ըսուած վրայօք խօսք կըլլայ հոս տեղս քանի մը ատենէ
ի վեր :

Դրիբոլի մէջ նորէն խուլութիւն պատահեցաւ և
Վս քաղքին տաճիկ ժողովուրդը զիմադարձութիւն
կրնէ ու չուզէր սովորական տուրքը վճարել խարճ
լագոյն Վրտնը և այլև վախնալով թէ իրենք ալ

ժուեցայ և անոր վրայ քիչ մը ինքըզինքս քաշեցի և
բայց ետքը նորէն յորդորուելով ընկերներէս և իմ մո
լութիւններէս, որ օր ըստ օրէ կաւենային, սկսայ նորէն
ստակ վաստղիլ, նոյն չար ճամբով և բայց օր մը երկու
րոպէի մէջ՝ առանց գիտնալու ի՞նչ ըլլայ, և ինչպէս
ըլլայ, մէյմընալ ինքըզինքս զինուորի կերպարանք մտած
տեսայ և հրաշմարտ ուսքս ստի ին և թշնամիին վրայ խրկե
ցին :

Արջափ լացի երբոր տասնկ վոնտուեցայ իմ տունէս և
և ո՛րչափ խիստ եկաւ ինձի զինուորական կեանքը, ինչ
ւան որ սորվեցայ և այսու ամենայնիւ երկու տարի այն
զինուորութեան մէջ անցընելով շատ փոխուեցայ և վարքս
չիտկեցի, և հնազանդ և աշխատասէր ու պարկեշտ երի
տասարդ մը եղայ : Չօրսավարը իր քովը առաւ իս ու եր
բեմն երբեմն ստակ կուտար ինձի, և երբեմն ալ բաժակ
մը գինի և ի վօրնայի բերդին պահապանն էինք, երբոր
մէկ առտու մը քանի մը նամակներ տուաւ ինձի իմ տէրս
որուն մէկը ամրոցին հրամանատարին տուելու էր, և
մէկալները թղթատարին և Վս ուրիշ հարկաւոր գործքի
մը համար չըրնալով շուտով կատարել անոր հրամանը,
թղթերը տեղ մը դրի, և ետքը նորէն դառնալով առի
զանոնք և նորեցի ան նամակը որն որ հրամանատարինը
կարծեցի ըլլալ, տարի տեղը տուի, և մէկալները թղթա
տարին յանձնեցի :

Հրամանատարը տունը չէր, անոր համար նոյն ժա
մանակին չիմացայ սխալ նամակ տալս անոր և ու իմ սո

պիտի պարտաւորին նոր սահմանագրութեանը հա
մեմատ և զինուոր տալ կառավարութեան և ամէնը
մէկտեղ ոտք ելլել են սո բանին դէմ կենալու հա
մար և Վս լուրերը իմացուելով և նաւատորմիղին մէկ
մասը անմիջապէս Վրիբոլի խրկուեցաւ և ուրտեղ
զնաց նաև Վսատ փաշան Վրէկի ըսուած շոգենաւով :

Երբայէն կըզրին թէ հոն տեղն ալ անկարգու
թիւններ պատահեր են և անկանոն գորքերու գունդ
մը Վսու պաշային վրայ յարձակուելով խորխու
բար պահանջեր են ու իրենց ամսականները վճարէ
Յիշեալ փաշան սո վտանգաւոր զիպուածէն զինքը
ազատելու համար պարտաւորուի է անոնց պահանջ
մունքը կատարելու և ու քանի մը գեղերէ իրենց
վճարելու տուրքը կանխիկ առնելով և կրցի է բա
ւական ստակ ճարելու :

Վաղը իոյ կառավարութեան Տիւթանդ ըսուած
գորվէղը Վթէնքէն հասաւ հոս և որուն մէջն է Վրի
վա յոյն զօրապետը և Վսիկա Յունաստանի կառավա
րութեան դէմ ապստամբած ըլլալով և կուզէր հիմա
կուհիմայ Վսորեստանու մէջ բնակիլ և բայց Վսատ
փաշան հրաման չտուաւ և թէպէտե Վաղը իոյ հիւ
պատան ալ շատ աշխատեցաւ սո բանին համար և
Ուստի յիշեալ գորվէթը պարտաւորեցաւ ճամբայ
ելլել երեկ և ու կերել թէ Վրէքսանդրիա կըրթայ
կըրթաւ զօրապետը հոն ձգելու համար :

Կատանգնուպոլոյ Անդղիոյ դեսպանատան քար
տուղար և թարգման մօսիւ Վրիսոնը սո օրերս Պէլ
վէտերս ըսուած անգղիական Փուէկաթով Վսօք հա
սեր է և ուսկից Վրուսադէմ պիտի երթայ և ու հոն
մասնաւոր պաշտօն մը ունի կատարելու կրտեն և նէք
անուն անգղիացի պատերազմական պուրք և ս յիշ
եալ նաւահանգիստը կըգտնուի և այլև Վստորիոյ
աէրութեան Պէլսոս Փուէկաթը և որուն մէջն է եր
րորդ ծովապետ պարոն Պանտիէոսն և քանի մը օր
հոս մնալէն ետքը և ճամբայ ելաւ Վսօք երթալու :

անմեղ ու պզտի պակտութիւնս այնքան շիտթութիւն ձը
գեց որ հրամանատարը սկսաւ սաստիկ յանգիմանել իս
ու հանեց ինձի իր քովէն ըսելով թէ՛ սո անբանին ձեռ
քէն քաշելքս չմնաց և ետքը իմ ընկերներէս մէկը առա
քովը ծառայութեան, որ քանի մը ամսուան մէջ տասնա
պետ եղաւ ու ետքը զինուորական պաշտօնատար ընտ
րուեցաւ և ու ես ամբողջ տասը տարի հասարակ զինու
որութեան մէջ մնացել էի :

Վս ժամանակիս մէջ մեծ դիպուածներ պատահեցան
իմ հօրս տունը և նախ մայրս մեռաւ և ու կրնաս գուն ինչ
նին իմանալ թէ ո՛րչափ ցաւ տուաւ ինձի զինքը կորսն
ցունելը և առանց անգամ մը երեսը տեսնելու ու ձեռքը
համբուրելու և Յետոյ տարիէ մը ետքը շարունակ անձրե
նիւրէն փրաւ հօրս տունը ու ջաղացքը և խեղճ հայրս
չինել տալու համար ստակ չուենալով և պարտաւորեցաւ
ծախել մնացած կահ կարասիքները ու թողու ձեռքի
արհեստն ալ :

Վուիճի իմ մեծ եղբայրս հօրս տունը ու ջաղացքը շի
նել տուող մարդուն աղջկանը հետ կարգուելով իր ա
նեքոյքը քով մնաց և Վոնինս միւս եղբայրս ալ երկրագոր
ծութեան արհեստին մէջ վարպետ ըլլալով և գաւառա
պետ (չիթթիկ քեահետար) եղաւ ու հայրս ալ քովը ա
ռաւ :

Ու երբոր տասը տարի զինուորական ծառայութիւն
ընելէն ետքը և վերջապէս ազատութեան հրամանս առի
հայրս ալ մեռած էր և Չ զինուորութեան ելլելուս պէտ

ՁԱՆՁԱՆ ԽՈՒՐՈՒՄ

Օգոստոս, 1 Յուլիս:

Քաղաքի կառավարիչ Ասեմախյալ Համոնի պէջը, երէկ առտու աւստրիական շոգենաւով կոստանդնուպօլիսէն հասաւ հոս . ուրտեղ իր բարձր աստիճանին վերաբերեալ պատուով ընդունեցաւ, ու քաղաքի ամրոյներէն 17 թնդանօթ արձակեցին ցամաքը ելլելու առեկը:

Մեր սրբազան Լուսնորդ գերապատիւ Մատթէոս Լուք եպիսկոպոսը՝ ընկերութեամբ ազգային հոգաբարձուներուն, նոյն օրը յիշեալ Ասեմախյալ Պէյին այցելութիւն ընելու գնաց, անոր դալուստը շնորհաւորելու համար:

— Կոստանդնուպօլիսէն երեկուան շոգենաւով կը ծանուցանեն թէ ամենապատիւ տէր Լուսնուածաւոր սրբազան Պատրիարքը հայոց իր հրաժարական խնդիրը մատուցելու է Բարձրագոյն Գրանը, ու անմիջապէս ազգային ժողով պիտի ըլլայ եղեր ուրիշ պատրիարք մը ընտրելու համար անոր տեղը:

— Տասնէհինգ օրէ՛ի վեր շարունակ սաստիկ տաք կընէ. Բօմբուլի ջերմաչափը ստուերին մէջ 25-26 աստիճանի կը հասնի, ու արեւուն մէջ 32-33 աստիճանի: Մանիսայէն կը գրեն թէ, հոն տեղին ալ աւելի սաստիկ է եղեր աս տարուան տաքը. միկիթներուն վրայի կապայները սկսեր են հալել արեւուն ջերմութենէն, ու չնձօններէն (օրադճը) շատ մարդիկ տաքութեամբ չգիմանալով մարեր են, ու մէկ երկու հոգի ալ մեռեր են: Եւ բանին վրայ Մանիսայու կառավարչին հրամանաւ արգելուէր է որ քանի մը օր հոնմէ չերթան արտերը:

— Մալթայէն կը գրեն թէ, Տըվէսթէշն ըսուած Բնգրոյ պատերազմական շոգենաւը յունիս 19ին հասեր է յիշեալ կղզին Կոստանդնուպօլիսէն գալով: Եւ նոյն օրը Գօրփուէպլ անուն եւսայարկ նաւը, որուն մէջն է սըր Լատուարդ Օվն ծովապետի փո-

խանորդը, ճամբայ ելեր է Երզնկեղազուր պտոյտ մը ընելու համար, ու ետքը Բօրփու կղզին պիտի երթայ եղեր:

— Քաղաքի կառավարութիւնը լսելով թէ խարդախ դրամ շնորհներ կը գտնուին Երզնկու մէջ, քանի մը առեկէ՛ի վեր մեծ զգուշութիւններ ու քննութիւններ կընէր զանոնք ձեռք ձգելու համար: Եւ ազգու միջոցները յաջող հետեանք մը ունեցան աս օրերս. վասն զի կառավարութեան զօրքերը հոսմի տուն մը յանկարծ մոնեկով, հոն տեղը գտան 3-4 հազար զուռուշի խարդախ (գալլ) նոր քսաննոց ոսկի ու ստակ կտրելու զանազան գործիքներ: Եւ իշեալ տանը մէջ մէկ մայր իր աղջիկով կը բնակէր որոնք կը խոստովանին թէ յանցաւորները իրենք են միայն, և ուրիշ ընկերակից չունին. բայց չկարծուիր թէ իրաւ ըլլայ ասոնց ըսածը:

— Բնգրոյ պատերազմի կը գրեն թէ Բարձրագաւտիւ փոխարքան անգղիականի համար իրեն յատուկ թարգման անուաներ է քաջատոհմիկ Կուպարեան ազայ Կուպարը, ու հազարապետութեան աստիճան ալ շնորհեր է անոր: Եւ լուրը մեծ ուրախութիւն պատճառեց քաղաքի հայազգի հասարակութեանը. վասն զի յիշեալ բարեսիրտ ազնուականը ալ աւելի պատուոյ և մեծագոյն աստիճաններու արժանի է իրեն բազմապատիւ քաղաքական տեղեկութեանց ու ազգասիրական գովելի եւ անդին համար:

— Ասեմախյալ մօտիւ տը Բարտօվան որ Կոստանդնուպօլսոյ մէջ Սպանիոյ տէրութեան դեսպանն է, անցած ամուս 27ին աւստրիական շոգենաւով հասաւ հոս Լուսնուածեան գալով, ուրտեղ զբօսանայ համար պտոյտ մը ընելու գացեր էր: Մօտիւ տը Բարտօվան, քուստնօրեայ զգուշութիւնը շոգենաւուն մէջ կընէ, ու լըմննալուն պէս պիտ' որ շարունակէ իր ճամբորդութիւնը Կոստանդնուպօլիս ելլելով:

— Բնգրոյ պատերազմի կը գրեն թէ, յիշեալ երկրին մէջ մարդասիրական նոր ընկերութիւն մը հաստատուեր

է: Լուսնուածեան մէջ բժշկական դեղեր ձրի տալու համար. ուրտեղ շատ խեղճ մարդիկ կեանքերնին կը կորսնցընեն օրինաւոր բժիշկ ու հարկաւոր դեղեր չըլլալուն համար:

Ռուսաց կառավարութեան ներքին խորհրդականք ու Վեհափառ Կայսեր սենեկապետը (չանպէլան) Ասեմախյալ Տեարք աղայ Զօհաննէս և աղայ Խաչատուր եղբարք Լազարեանք բարեգութ ասպետները որ ՚ի Բեղրոպուրկի, իրենց ժառանգական հայրենասէր ոգիէն շարժեալ, ու Միւնեսց Բնկերութեան ազգօգուտ նպատակը աղէկ իմանալով, բարեհաճեցին տասը հազար օսմանեան դուռուշ յուղարկել ձեռամբ Բեղրոպուրկի մեծանուն սեղանաւոր պարոն Շտիկիթի ՚ի նուէր յիշեալ Բնկերութեանը. որուն կառավարութեան կը խնդրեն, իրենց մեծարելի նամակաւ ՚ի 7-19 յունիսի օր նոյն գումարը հաւատարիմ սեղանաւորի մը քով տալով, կամ ուրիշ եղանակաւ մը շահեցընելով (ինչպէս որ արժան կը համարի Բնկերութիւնը,) անոր տոկոսը տարոց տարի եկամուտ մը ըլլայ Բնկերութեանը:

Միւնեսց Բնկերութեան կառավարութիւնը, քաղաքի Հոլանտայի ընդհանուր հիւպատոս և ասպետ մեծապատիւ մօնսիւ Դաքօպ Վան Լէննէփին ձեռօքը վերոյիշեալ նամակը և տասը հազար դուռուշը ընկալաւ, ու միտք ունի աս ստակով կալուածք մը կամ քարաշէն խանութ մը կը ծախուտանէ. բայց ինչուան աս գործը արժանաւոր կերպիւ մը կարգադրելը, հիմակուհիմայ տարին հա-

Սե հայտեր երեւի անձը, որ զանազան տէրութեանց բազմապատիւ աստիճաններու տապետ, ու մեծանուն վարդապետ և ասպետ է քաղաքի մէջ, հողով չափ ուրախացաւ աս հայրենասիրական նուէրին ու Միւնեսց Բնկերութեան ազգօգուտ նպատակին վրայ. յորտեղ մտոր յարգի անգամները յարասակելի իրենց ազգասիրական և ուսումնասիրական գովելի ջանքին մէջ միաբանութեամբ ու եղբայրական սիրով. ուստի կը յուսանք որ յիշեալ բարձրաստիճան պաշտօնատարը իր բազմաթուփ խնամքը ու մարդասիրական հովանաւորութիւնը պակաս չենք աս բարեմիտ Բնկերութեան վրայէն:

շուտ մը Վալ Տէլսոյ գացի. վասն զի խիստ կարօտցեր էի տեսնելու իմ կողմայններս, և միտքս զրի որ քիչ մը ատեն անոնց քով կենամ: Կախ գացի Լուիճի կողմայն գտնելու. ու երբոր անիկա տեսաւ իս, գրկեց խիստ մեծ սիրով, ու երկուքին մէկէն լացիք մեր ծնողաց մահուանը վրայ. ետքը տարաւ իս իր կնոջը քով, որ շատ պատիւ ցուցուց ինձի ու ճաշի ալ հրաւիրեց: Եւ պարոնին անունը Վալէնդինօ Գրէչչի էր, որ շատ հարստացած էր ցորենի առուտորին միջնորդութիւն (սըմսարըք) ընելէն. բայց խոժոռահայեաց դէմք մը ունէր, նաև բարիք մը ըրած ատենն ալ անանկ գեղջկական կերպերով կընէր, որ մարդ չէր կրնար շնորհապարտ ըլլալ անոր: Եւ իկա իր աղջիկը խիստ սիրելուն՝ կը բօսաւ ալ սէր կը ցուցնէր, բայց խիստ չնչին ու պղտի բաներուն մէջ ալ խառնուելով ինքնիշխան տէր ըլլալը յայտնի կընէր:

Եւ նոյն օրը Լուիճի կողմէն հետ մինակ խօսակցելով յայտնեցի անոր իմ բաղձնալքս՝ որ ունէի անոր և իր գերդաստանին քով մնալու. բայց անիկա պատասխան տուաւ ինձի ըսելով թէ որովհետև գերդաստանին գրուելու իր աներն է, ուստի հիմակուհիմայ ուրիշ բան չէր կրնար ընել, բայց միայն անոր յանձնել իս որ գործքի մը վրայ զնէ: Ուստի շուտ մը ձերին քովը տանելով, սրտանց խօսեցաւ անոր հետ ինձի համար: Պարոն Վալէնդինօն օտքէս մինչև գրուելու աղէկ մը նայելէն ետքը, ըսաւ ինձի «Թէ որ աղէկ հաշիւ ընել գիտես նէ, կրնաս օգնել մեզի դրաման մէջ, ուրտեղ միշտ գործ պակաս չէ»:

Եւ խօսքիս վրայ արիւնս պաղեցաւ մնաց. և որովհետև պատասխան կը պատահէր ինձմէ, ուստի իս պղտիկ չձգելու համար անոր քով, ըսի թէ թուարանութեան մէջ այնքան համարձակ ու յաջողակ չեմ: Կրկնեց անտեսնելու ըսաւ ինձի. ուրեմն ջաղաքը կեցիք, որ հոն եկած ցորենի պարկերը (չուվալ) և գացած աղբը նշանակու թղթի մը վրայ: Մտածե անգամ մը թէ որչափ խպնեցայ երբոր հարկ եղաւ ճշմարիտը զընցել անոր թէ ո՛չ կարդալ գիտեմ և ո՛չ գրել: Գիտես ինչ ըսաւ ինձի անտեսնել պարոն Վալէնդինօն, քեզի պէս էլ մը ինձի հարկաւոր չէ, ըսաւ, վասն զի քեզմէ աւելի մեծ էլ մը ունիմ, որ ջաղաքը կը գործընէ, և ասանկ ըսելով դարձուց երեսը անդին ու ձգեց գնաց:

Եւ սիրտս, նմանապէս և իմ կողմէն սիրտը շատ կոտրեցաւ. սկսանք մէկմէկու երես նայել քիչ մը ժամանակ առանց խօսք մը հանելու բերաննէս: Արեւապէս յայտնի զընցեց ինձի կողմէն ըսելով. Եւ տեղս ասանկ դատարկ կենալու, կրնաս բեռնակրութիւն ընել, վասն զի ուրիշ մէկ գործքի մը մէջ մտնելու յաջողակութիւն չունիս: Եւ մնացայ ես որ խելքով էր անոր խօսեցածը. միտքս զրի միւս կողմէն քով երթալ, որ գաւառապետ էր, յուսալով որ ինձի աղէկ գործ մը կը գտնէ:

Հետեւեալ օրը առտուն ճամբայ ելայ, և կէս օրին հասայ անոր եղած կալուածքը (չիֆտլիք): Եւ երկիրը շատ մղոն տարածութիւն ունէր, և արտերը աղէկ մշակուած էին: Մէջ տեղը գեղեցիկ գեղ մը կար, որոնք

մէկ կողմը վայրի կենդանիներուն փակարանն էր, միւս կողմն ալ ընդարձակ ու գեղեցիկ պարտեզ մը կար: Եւ ասոնց մէջ զմայլած կը քայլէի, ու սիրտս ուրախութեամբ կը լեցուէր մտածելով որ անոնց մէջ պիտի բնակիմ:

Երբոր պարտիզէն գուրս ելայ, գեղեցիկ կնիկ մը տեսայ մաքուր հագուած ու երեք պղտի տղաք հետը, որոնց դէմքը ինձորի նման կարմիր էին: Մտեցայ անոր ու հարցուցի թէ ո՛ր է գաւառապետը. ես անոր կինն եմ ըսաւ. անիկա վերն է, բայց քիչ ատենէն վար կիշնայ ճաշի երթալու համար:

Եւ իմ սրտիս սաստիկ ուրախութեան համարձակեցայ անոր տղաքը գգուել, և ըսի թէ՛ ես ձեր հօր եղբայրն եմ:

Բայց աս տիկինը պաղ դէմքով մը կրկնեց. «Տէ, դժն ես իմ երկանս կողմէն, որ մինչև հիմայ զինուոր էր: Եւ ի՞նչ խաթուն ես եմ, պատասխան տուի, գուցէ լսած էք իմ տղայութեան ժամանակի ըրած գործքերուս պատմութիւնը. բայց տասը տարի զինուորութիւն ընելով, խելքս գրուելու եկաւ հիմայ: Եւ շատ աղէկ, ըսաւ տիկինը իր պղտի տղուն ձեռքէն բռնելով:

(պիտի շարունակուի)

ընդհանուր 10 տոկոս հաշուելով, որ կրնի հազար դոլար...

Սինեաց լեզուով խոսողները կառավարութիւնը անհրաժեշտ պարտաւորութիւն կը համարի իր մտերիմ երախտագիտութիւնը...

Ինչպէս որ օրագրին նախընթաց թուովը խոստացեր ենք, պարտ կը համարենք մեզի հրատարակել այսօր Սինեաց լեզուով խոսողները...

ՈՒՂԵՐԶ

- Աստուածընտիր Վեհափայլ ՆԵՐՍԵՍ Սրբազան Կաթողիկոս ամենայն Հայոց:
Գեր Աթոռոյ Յաւիտենիկ անջնջ պատգամ
Յանուշ կատար գայի թէ վաղ թէ անագան:

Table with 2 columns: Donor Name and Amount. Includes entries like 'Ղուկաս Գ. Պարզազարեան' and 'Մարիամ Փիլիճեան'.

Յօժարամիտ սրտիւ կը շարունակենք հրատարակել Սինեաց լեզուով խոսողները...

Table with 2 columns: Donor Name and Amount. Includes entries like 'Յակոբ Սարգսեան' and 'Թագաւոր Սրբազարեան'.

Սինեաց լեզուով խոսողները քսան ստորագրութիւնը ինչպէս որ ներկայ թուոյս մէջ յիշատակած ենք...

Պրոբսէի (Պէճիզա) ազնուական երիտասարդներէն մէկը արտաքոյ կարգի ղեկավարութիւն մը ունեցաւ ինքզինքը վիճակահանութեան (փխնթօ) ղեկու. շնորհագեղ դէմք մը ունի, կրակ, ազնիւ վարմունք, ազատագրի անուն, ու բաւական տաղանդ:

Հանութեանը, ու տոմսակիւն մէջ գրուած է թէ 18 տարեկանէն ինչուան 30 տարեկան ըլլալու են:

ԱՄԻՔՏՐԱՍԱՆ ԽՈՒՐԻՔՅՍԱՆՆԵՐ

Սինեաց լեզուով խոսողները ի վեր նշանակութեան արժանի այլայլութիւն մը չեղաւ քաղաքիս առուտորին վրայօք. որ միշտ մեծ անշարժութեան մէջ կը դանդաղի:

ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ

Աստուածընտիր Վեհափայլ ՆԵՐՍԵՍ Սրբազան Կաթողիկոս ամենայն Հայոց:
Սինեաց լեզուով խոսողները քսան ստորագրութիւնը ինչպէս որ ներկայ թուոյս մէջ յիշատակած ենք...